

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
15.03.2016թ. թիվ 02/02-Լ որոշման
Հանձնաժողովի նախագահի
Արա Զոհրաբյան



**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ
ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)**

1. Քաղաքացիական մոդուլի՝ հայցադիմումի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))

- **Հայցադիմումին ներկայացվող ձևական պահանջներ՝** ընդհանուր միավորը՝ մինչև **2 (երկու)**.

- **Նկարագրական մաս (փաստերի ընտրություն)**՝ ընդհանուր միավորը՝ մինչև **5 (հինգ)**, որից յուրաքանչյուր ավել ընտրած և վեճի համար էական նշանակություն չունեցող փաստի համար նվազեցվում է 0,5 միավոր (2 միավորից ոչ ավել), յուրաքանչյուր չընտրած և վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի համար նվազեցվում է 1 միավոր (3 միավորից ոչ ավել)։

- **Պատճառաբանական մաս՝** ընդհանուր միավորը՝ մինչև **9 (ինը)**, որից՝ **ա)** յուրաքանչյուր ավելորդ (վեճի լուծման հետ ուղղակիորեն կապ չունեցող) վկայակոչված իրավական նորմի և/կամ պատճառաբանության համար նվազեցվում է 0,5 միավոր (1 միավորից ոչ ավել), **բ)** սխալ վկայակոչված (գործի փաստերի նկատմամբ ոչ կիրառելի) իրավական նորմի և/կամ պատճառաբանության համար նվազեցվում է 1 միավոր (2 միավորից ոչ ավել), **իսկ գ)** չվկայակոչված (անհրաժեշտ և կիրառելի) իրավական նորմի (նորմերի) կամ ճիշտ վկայակոչված նորմի (նորմերի) թերի կամ սխալ պատճառաբանության համար նվազեցվում է մինչև 6 (վեց) միավոր։

- **Եզրափակիչ մաս՝** ընդհանուր միավորը՝ մինչև **4 (չորս)**։

2. Քաղաքացիական մոդուլի՝ վճռի դեմ վերաքննիչ բողոքի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))

- **Վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջներ՝** ընդհանուր միավորը մինչև **2 (երկու)**.

- **Վերաքննիչ բողոքի հիմք և հիմնավորումներ**, այդ թվում՝ դատական սխալի վերհանում, նյութական և/կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև հիմնավորվածություն և պատճառաբանություն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի վերլուծություն և համադրում գործի փաստերի հետ, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորում և տրամաբանական կապ ներկայացված պահանջի հետ՝ ընդհանուր միավորը մինչև **16 (տասնվեց)** (սույն չափանիշով գնահատման համար հաշվի է առնվելու նաև ոչ էական նորմերի և/կամ փաստերի վկայակոչումը)։

- **Վերաքննիչ բողոքի պահանջ (խնդրամաս)**՝ ընդհանուր միավորը մինչև **2 (երկու)**։

3. Քրեական մոդուլի՝ միջանկյալ դատական ակտի կամ դատավճռի դեմ ներկայացվող վերաքննիչ բողոքի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))

- **Վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջներ**՝ ընդհանուր միավորը մինչև 2 (երկու)։

- **Վերաքննիչ բողոքի հիմք և հիմնավորումներ**, այդ թվում՝ դատական սխալի վերհանում, նյութական և/կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև հիմնավորվածություն և պատճառաբանություն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի վերլուծություն և համադրում գործի փաստերի հետ, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորում և տրամաբանական կապ ներկայացված պահանջի հետ՝ ընդհանուր միավորը մինչև **16 (տասնվեց)** (սույն չափանիշով գնահատման համար հաշվի է առնվելու նաև ոչ էական նորմերի և/կամ փաստերի վկայակոչումը)։

- **Վերաքննիչ բողոքի պահանջ (խնդրամաս)**՝ ընդհանուր միավորը մինչև **2 (երկու)**։

4. Դեռնթուլոգիայի մոդուլի գնահատման չափանիշներ (առավելագույն միավորը՝ 20 (քսան), անցողիկը՝ 12 (տասներկու))

Ներկայացվում է ընդհանուր 4 (չորս) խնդիր, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է մինչև **5 (հինգ) միավոր**, որից 1 (մեկ) միավորը տրվում է ճիշտ պատասխանին (այո կամ ոչ), իսկ մինչև 4 (չորս) միավորը՝ վերլուծությանը (հիմնավորումներին)։